Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արարատի մարզի ,,Արբաթի Հովիկ Զաքարյանի անվան միջն. դպրոց.. ՊՈԱԿ-ի պատմության (7 դասաժամ) , քիմիայի (8 դասաժամ), կենսաբանության (10 դասաժամ) , ինֆորմատիկայի (8 դասաժամ) , ֆիզկուլտուրայի(16 դասաժամ) տեխնոլոգիայի (4 դասաժամ) և ռուսաց լեզվի (9 դասաժամ) ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝թեստավորման և հարցազրույցի : Թեստավորման փուլն անցկացվում՝ է ըստ ՀՀ ԿԳՍՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում / Ձև 1/ , մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ/ դիպլոմ/
- անձը հաստատող փաստաթուղթ
- .. Հանրակրթության մասին .. ՀՀ օրենքի 26-րդհոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը / առկայության դեպքում /, - ինքնակենսագրություն / Ձև 5 /,
- այլ պետությունների քաղաքացիները՝ՀՀ –ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր / առկայության դեպքում
-որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ :

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջությամբ չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 31-ից մինչև սեպտեմբերի 13-ը ներառյալ , ամենօր՝ժամը 10:00-ից 15:00-ը , բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթըտեղիկունենասեպտեմբերի 15-ին՝ժամը 14:00-ին ,

ՀՀԱրարատիմարզիԱրբաթիՀովիկԶաքարյանիանվանմիջն. դպրոցում. հասցեն՝Արարատիմարզ , գ. Արբաթ , փ.4, շ.48:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 098472420 հեռախոսահամարով: